Եւս յայտ լիցի, նախ քան իւր հասանիլն լիվորնայ, մոնսինեօր ասիմանն գրած է անդ թէ փափին աչաց անկեալ իբրեւ աքսորեալ ելաւ Հռոմայու, բայց ետոյ փափին գիրն հասանելով անդ, որ մեծ պատվով և սիրով գրած էր պատրիարքին, և տէր ակոբն որինակն առեալ տարածելով ամենայն ներհակքն աբիբերան եղեալ են. նաեւ յայտ լիցի որ իւր աշակերտ հալէպցի տէր Նիկողայոսն զատեալ պատրիարքէն անդ մնացեր է, թէպէտ ջանացի և աղաչեցի պատրիարքին թէ այս անձս չի մնայ երկիրն քրիստոնէից, զի սորա աստ մնալն նախատինք է անուան նոյն պատրիարքին և այլն. և յաժամս ասեմ թոյլտվութեամբ աստուծոյ եղև. կամք տեառն օրհնեալ եղիցի։

Նախ քան պատրիարքին տեղէս գնալն լսեցաք, թէ մխլաիմ օղլին նափոլի տեսած են, և պատրիարքն յոյժ ցաւեր այս բանիս վերայ, կարծեմ լվեալ իցէք։

Եւս յայտ առնեմ, տեղս աղանդ իմն ըսկըսեալ, և ըսկսեալ էր տարածիլ յոյժ ծածկաբար, բայց ետոյ ումեմն մեծատան աղախինն յայտնեաց սանթոֆիցօին որոյ գործակալքն մի և նոյն ժամի անկարծորեն բռնեցին զգլխավորս նոցին և ոմանք բախեան. և աղանդն էր այս, թէ սիրել զաստուած և զընկերս, ոչընչացուցանելով զայլս պատգամս աստուծոյ և եկեղեցնայ, և վերոյասացելոյն ամենայն ոք հաւանումն տվողն պարտեր իւր արեամբն հանդերձ երդմամբ գրել։

Մօտերս ի վանքի միոյ մին կոյս մեռաւ, և նախապէս ճանաչելով զվարս նորին հրամանաւ կարտինալ վիքարին բացեալ գտին ի վերայ սրտին երեք կամ և այլ նշանք չարչարանքայն քրիստոսի. ես նոյն վանքի կուսանացն կամեցայ լսել։...

Հասարակապէս ասեն թէ փափն առաջ քան զսուրբ աստուածածնայ ծնունդեան տօնն ԻԴ կարտինալ առնելոց է։...

Խոնարհագոյն ծառայ
[պատկերահան] Յոհաննէս

Ամի տեառն 1743, Օգոստոսի 31
[ի Հռովմ]

ՃԻԴ.

Հայ կաթողիկէ Նուիրապետութեան սկզբնական շրջանին վերաբերեալ պատմական ծանօթութիւններ և անցքեր կը լսենք Աբրահամ – Պետրոսէ՝ իր անցած վայրերէն։

Գերյարգելի եղբօրդ իմոյ Մխիթար աբբայ հօրդ
Ողջուն

[Աղեքսանդրիա] 1743 Սեպտեմբեր 25

Յայտ լիցի վերոյգրեցելոյ զի ահա ողորմութեամբն Աստուծոյ հասաք և աղօթիւք հասարակութեան ողջ և խաղաղ ի մեծ քաղաքն յաղէքսանդրիեա, ի սեպտեմբերի 13. և աստի գամ աստուծով ի վանքն մեր. բայց ոչ գիտացի թէ զինչ պատասխան գրեցեր ինձ զոր գրեցի ի յալիկօռնայու, զի յանկարծակի պատրաստեցաւ նաւն ի մէջ ե յաւուր գնալ դատարկ. և ես իբր ի յաստուծոյ պատրաստեցեալ համարեցայ և չուեցի, ասելով թէ գնամ և տեսանեմ զորպիսութիւն ամենից իրաց վանքին և քաղաքին. եթէ հարկն պահանջէ առնիցեմ ըստ պիտոյից և օգտի։ Բայց լուայ թագաւորն Գալլիոյ գրեաց իւր հրեշտակին թէ ի հարկէ պարտիս դարձուցանել զեկեղեցին Բերիոյ որպէս էրն, և միտ դնել և օգնել Պետրոս կաթողիկոսին Հայոց նոր հաստատեցելոյ ի սրբոյ Գահէն. զի Սրբութիւնն գրեաց և խնդրեաց. և լիցի քեզ այս գործ հարկաւոր և յատուկ. բարի է յուսալ ի տէր, զի ի վերայ մեր երկրին Գ փաշայ բազում զօրք յարեաւ. յառաջ քան